# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 14/Կլ-1596 «21» 05 2019թ.

Քաղ. Հ.Խաչատրյանին
(ք.Երևան, Նորաշեն թաղ., 40 շենք, բն.69)

Երևանի քաղաքապետին հասցեագրած Ձեր հարցման վերաբերյալ, կապված մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի համակարգի բարելավման խնդիրների հետ, հայտնում եմ հետևյալը:

Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների գործընթացի շրջանակներում, Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի աշխատանքների ընթացքում, խորհրդատու ընկերության կողմից մշակվել և ներկայացվել է Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանց: Այն ներկայումս գտնվում է քննարկման փուլում և կազմակերպվել են մի շարք քննարկումներ Երևանի քաղաքապետի որոշմամբ ստեղծված մասնագիտական աշխատանքային խմբում: Երթուղային ցանցի հաստատումից հետո կհաջորդի դրա իրականացումը (մասնավորապես, ավտոբուսներին ներկայացվող չափորոշիչների ճշգրտման և ավտոբուսների ձեռք բերման հնարավոր տարբերակների մասով):

Հարկ եմ համարում նշել, որ նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի ներդրման աշխատանքները մեծ ծավալի են և դրա համար պահանջվում է երկար ժամանակ:

Աշխատանքները այս ուղղությամբ շարունակվում են:

Աշխատակազմի տրանսպորտի
վարչության պետ Հ.Նավասարդյան

Հասարակական տրանսպորտի
կարգավորման բաժնի պետ,
Հ.Մելքումյան ☎ 011514198